ԳՈՒՐԳԵՆ ԲՈՐԻՍԻՉ

- Բարև բալա ջան։

Միշտ՝ հուզված թե ուրախ, հուսահատության թե տխրության պահերին, անկախ այն բանից, թե դիմացինը դրան տրամադրված էր թե ոչ, այս ձևով էր բարևում ժողովրդական դերասան Գուրգեն Գաբրիելյանն իր՝ առանց բացառության բոլոր մեծ ու փոքր ծանոթներին։ «Բալա ջան»-ով էր դիմում նա կուլտուրայի մինիստր Անդրանիկ Շահինյանին ու ամենաշարքային աշխատակցին, Կինոստուդիայի դիրեկտոր Մխիթար Դավթյանին, ստուդիայի հնագույն ռեժիսոր և բոլորիս պատկառանք ներշնչող Արմենակ Դանիելյանին (Հայկանուշ Դանիելյանի մեծ եղբորը), որը տարիքով իրենից շատ մեծ էր, ինձ և ուրիշ-ուրիշներին։ Իր ապակեգույն, մշտապես զարմանքի ու չարաճճիության արտահայտություն ունեցող աչքերը հառելով դիմացինի վրա, միայն իրեն հատուկ ձևով քիչ թեքելով գլուխն ու չփչփացնելով իր՝ ինչպես ինքն էր արտահայտվում «լոշտակ» շրթունքները, մանավանդ «Բարև բալա ջանի»-ից հետո, ստացվում էր այնքան զավեշտական արտաքին, որ ակամայից, հաճախ նույնիսկ առանց քո ցանկության, մնում էր միայն քահ-քահ ծիծաղել։

Այո, Գուրգեն Գաբրիելյանը գիտեր մարդկանց ծիծաղեցնել, ավելի ճիշտ՝ գիտեր անել այնպես, որ դիմացինը ծիծաղի, ըստ որում, ծիծաղի հատկապես այն արտահայտության կամ նույնիսկ այն բառի վրա, որն ինքն էր ցանկանում։ Եվ կարևորն այն է, որ դա բնավ չէր արվում իրեն ծիծաղելի դրության մեջ դնելու, կամ ինչ-որ շինծու-կոմիկական արարքներ թույլ տալու միջոցով։ Ամենևին. կոմիզմը նրա մոտ ունակություն էր, բնատուր ու բնական ձիրք, որով բնությունն այնքան առատորեն էր օժտել նրան, որի համար էլ նրան շատ ճիշտ էին բնորոշում՝ «Ծիծաղի վարպետ»։ Ամենալուրջ բաների մասին էլ, երբ խոսում էր, ամենածանրակշիռ հարցերի մասին անգամ, երբ արտահայտվում էր այս կամ այն ներկայացման քննարկման ժամանակ, նրան չէր կարելի առանց ծիծաղի լսել։ Ես գիտեի շատ մարդկանց, ովքեր Գաբրիելյանի այս կամ այն սրախոսությունը, թևավոր արտահայտությունը զանազան առիթներով օգտագործում էին իրենց խոսքի մեջ, և, որպես օրենք, արդյունքն անմխիթար էր լինում. լսողները կամ չէին ծիծաղում, կամ ժպտում էին մի թեթև, քաղաքավարությունից դրդված։ Եվ եթե կարդալու ժամանակ, սիրելի ընթերցող, դու չես ծիծաղի կամ սոսկ կժպտաս այս կամ այն երևույթի իմ վերարտադրության վրա, ապա իմացիր, որ դրա մեղքը միայն իմն է, որովհետև ես միշտ էլ վատ շարադրող եմ եղել, իսկ մենք, Գաբրիելյանի «օյիններին» ականատեսներս, միշտ էլ շնչահեղձ ենք եղել ծիծաղից։

Հիշում եմ այսպիսի մի դեպք։

Կինոստուդիայի առջևից, մայթի մոտով մի փոքրիկ առվակ էր հոսում, որպիսին հաճախ էր գոյանում Երևանում գարնանային հալոցքների կամ փողոցները ջրելու հետևանքով։ Ջրի լայնությունը չափազանց փոքր էր, հազիվ չորս-հինգ մատնաչափ։ Դիմացի մայթից գալիս էր Գուրգեն Գաբրիելյանը, և նկատելով հոսող ջուրը, ընդոստ կանգ առաջ։ Նախ՝ արագ-արագ թարթեց աչքերը, տարակուսանքով քորեց ծոծրակը, հանեց ու կրկին հագավ գլխարկը, և ապա, կտրուկ մի ժեստով գլխարկն ավելի՛ ամրացրեց գլխին, գրեթե մինչև ծնկները վեր քաշեց տաբատը, թափ առավ ու թռավ այնպիսի վճռական թափով, որ կարծես ահռելի ջրանցք էր հաղթահարածը։ Մեր ծիծաղին չափ չկար, սակայն այդ ծիծաղը հոմերական դարձավ, երբ պարզվեց, որ այդպիսի մեծ նախապատրաստությունից հետո Գաբրիելյանը երկու ոտքով «թռել է» ուղիղ ջրի մեջ...

Քիչ ժամանակ էր անցել այդ դեպքից հետո, երբ նկատեցի, որ ստուդիայի աշխատողներից մեկը դեպքը պատմում է ընկերներին, ըստ որում աշխատում էր վերարտադրել Գաբրիելյանի շարժումներն անգամ։ Սակայն արդյունքն այնքան ողբալի և, նույնիսկ, տափակ ստացվեց, որ ե՛ս էլ սկսեցի մտածել, թե հիրավի, ի՞նչ մի բան կար այստեղ, որ բոլորս այդպես ծիծաղում էինք։ Բայց չէ՞ որ մի քանի րոպե առաջ, նույն այդ եղելության Գաբրիելյանի կատարումը տեսնելով, մենք կոտորվում էինք ծիծաղից...

Ոչ միայն տարին, այլև ամիսն ու օրն եմ հիշում, թե երբ ծանոթացա Գուրգեն Բորիսիչի հետ։ Դա 1954 թվականի հուլիսի 12-ին էր։ Մինչև այդ էլ մենք ծանոթ էինք,բայց դա «մի թեթև» էր, ըստ որում այդ թեթև ծանոթությունն էլ սկսվեց շատ օրիգինալ կերպով, և ես այն ուզում եմ պատմել։

Թատերական ընկերությունն Արվեստի աշխատողի տանը կազմակերպել էր Մինկոյի «Առանց անունները տալու» ներկայացման քննարկումը, որտեղ հոր դերը կատարում էր Գաբրիելյանը։ Ես չգիտեի, որ այդ դերը հանձնված է եղել նախ՝ Մսրլյանին, ապա վերջինիս հիվանդության պատճառով, ներկայացումը չտապալելու համար հապճեպ կերպով պատրաստել են Գաբրիելյանին, և այս շտապողականության պատճառով Գաբրիելյանն ինքն էլ գոհ չէր իր խաղից և այլն։

Քննարկման ժամանակ ելույթ ունենալով, ես համադրեցի այս երկու դերասանների խաղերը և հայտարարեցի մոտավորապես հետևյալը. «Ընկեր Մսրլյանն, անկասկած, ավելի ճիշտ

է վարվում, դրամատիկական ուժեղ շեշտեր մտցնելով կատարման մեջ, որի հետևանքով նրա խաղն ավելի ճշմարտացի ու համոզիչ է, քան Գուրգեն Գաբրիելյանինը»։

Թեր ու դեմ խոսեցին ուրիշներն էլ, և երբ ընդմիջման ժամանակ կանգնած էի միջանցքում, շրջապատված մի խումբ ընկերներով, ինձ մոտեցավ Գուրգեն Գաբրիելյանը։

- Բարև վարսավիր ջան, – զինվորականի նման կտրուկ շեշտերով արտաբերեց նա, ձեռքը մեկնելով։

Շուրջս կանգնածները ծիծաղեցին, ծիծաղեցի ե՛ս էլ, չիմանալով, սակայն, թե ինչու եմ այդպիսի հորջորջման արժանացել։

- Բալա ջան, նոր վարսավիրի նման թրաշ անել ես սովորում, հա՞, – շարունակեց նա, – ու թրաշն էլ իմ գլխից ես սկսում, է՛լի, – Գաբրիելյանը մի ձեռքով գրկեց ինձ, – Լավ է, շատ լավ է։ Հանկարծ չկարծես, թե նեղանում եմ։ - Եվ Գաբրիելյանը այնպիսի կոմիկ լրջությամբ խաչ հանեց երեսին, որ ես սկսեցի ծիծաղել։ - Ընդհակառակը, շատ եմ ուրախանում, որ քեզ նման լավ տղերք են հանդես գալիս, որոնք կարողանում են ճշտորեն հասկանալ թատրոնը։ Այ դա ինձ շատ է դուր գալիս։ Է՛հ, մնամ հերթական թրաշի հաջորդ համարին սպասող, և նմանապես ձեզ հարգող Գուրգեն Գաբրիելյան։

Եվ Գաբրիելյանը երկու ձեռքերը սեղմելով՝ ձգվեց ոտքերի ծայրերի վրա, ծիծաղելի ձևով աչքով արեց ինձ ու հեռացավ, թողնելով մեզ քրքիջի մեջ։ Այս օրվանից սկսած մենք բարևում էինք իրար, ավելի ճիշտ՝ ես առիթը բաց չէի թողնում նրան բարևելու համար, թեև, ինչպես շատ հետո ինքը խոստովանեց, լավ չէր հիշում, թե ես ով էի։

Սակայն մեր ծանոթությունը հիմնավորապես սկսվեց, ինչպես արդեն ասել էի, 1954 թվականի հուլիսից, և սկսվեց այսպես.

Կինոֆիլմը ռուսերենից հայերեն թարգմանելիս, անհրաժեշտ է այդ թարգմանությունը էկրանի վրա ստուգել և հասնել նրան, որ ռուսերեն ու հայերեն նախադասությունները վանկերի քանակով իրար հավասար լինեն։ Այս աշխատանքը, վերոհիշյալ երկու լեզուները գերազանց իմանալուց բացի, պահանջում է մեծ արագություն, պահանջվող բառի հոմանիշները շուտափույթ կերպով գտնելու կարողություն և այլն։ Ես այս աշխատանքի համար էի ընդունվել Կինոստուդիա, բայց որոշ նախապատրաստություն դեռ պետք է անցնեի Գաբրիելյանի մոտ, որովհետև այդ գործում նա անզուգական վարպետի համարում ուներ։ Եվ ահա, սցենարական

բաժնի վարիչը համապատասխան մեկնաբանումներով մեզ ծանոթացրեց, և մենք պայմանավորվեցինք, որ հաջորդ օրը առավոտյան ժամը 10-ին պիտի հանդիպենք իրար՝ աշխատանքն սկսելու համար։

Ժամը 10-ին ես տեղում եմ, իսկ Գուրգեն Բորիսիչը չկար։ Սպասեցի երկար, Գուրգեն Բորիսիչը չկար ու չկար։

Եկավ ժամը 11-ին։

- Բալա ջա՞ն, էս խեր ըլնի, էսքան շուտ ինչի՞ ես եկել, – խիստ զարմացած դեմքով հարցրեց նա։

Ես էլ, իմ հերթին, զարմացած նայեցի նրան։

- Ինչպես թե շուտ, ժամը 10-ին էինք պայմանավորվել։ Ես այդ ժամին էլ եկել եմ և... - ուզեցի շարունակել ես։

- Պայմանավորվելը՝ պայմանավորվել ենք, – ընդհատելով ինձ, ամենայն լրջությամբ պատասխանեց Գաբրիելյանը, – բայց, բալա ջան, ո՞ւմ ժամանակով։ - Լուրջ Գաբրիելյանը հանկարծ ծիծաղեց, և այդ անցումն այնքան անսպասելի-կտրուկ էր, որ ես էլ ծիծաղեցի։ - Կա, օրինակ, դիրեկտորական ժամանակ, որը մի վեց ժամի տարբերություն ունի, կա նկարահանման ժամանակ, որը միշտ աշխատում են կրճատել, որ մեզ քիչ վարձատրեն, կա Մոսկվայի ժամանակ, կա... էլ ո՞րն ասեմ, ո՞րը թողնեմ ախր..., – նա միանգամայն հուսահատ կերպարանքով տարածեց ձեռքերը, – այ մեր սխալը նրանում էր, որ ժամադրման մեջ այս կարևոր պայմանը մոռացել էինք և ես էլ այն օգտագործերի հօգուտ ինձ, բա՞։

Գաբրիելյանն ինձ հետ այնպես էր խոսում, կարծես մենք մի տաս տարվա ծանոթներ լինեինք։ Նա դարձյալ շարունակեց, բերեց բազմաթիվ ծիծաղաշարժ օրինակներ, և, ի վերջո, ստացվեց, որ դեռ մի բան էլ ե՛ս էի մեղավոր ճիշտ ժամին ներկայանալուս համար։

Այդ օրվանից սկսած, մեր ժամադրության մեջ հանդես եկավ պայմանավորվելու այսպիսի օրիգինալ ձև։ «Բալա ջան, տա՞նն ես, – առավոտյան մեր տուն էր զանգ տալիս Գաբրիելյանը։ Տանն եմ, – պատասխանում էի ես։ ՈՒրեմն ժամը 9-ին հանդիպում ենք, – շարունակում էր նա, – բայց 9-ին ասում ենք, 10-ին հասկանում»։

Նշանակում էր հանդիպելու ենք 10-ին։

Այդպես շարունակվեց մեր համատեղ ամբողջ աշխատանքի ընթացքում. «10-ին ասում ենք, 12-ին հասկանում, 8-ին ասում ենք, 9-ին հասկանում», – հեռախոսով հայտնում էր Գաբրիելյանը, և ես արդեն գիտեի, թե դա ինչ է նշանակում: Ժամադրվելու մեր այս ձևը շուտով տարածվեց նաև Կինոստուդիայում:

Ընդհանրապես, ժամի հարցում Գաբրիելյանն անճշտություններ շատ էր թույլ տալիս, և շուտով ես կարողացա հասկանալ դրա պատճառը: Բնավորությամբ լինելով ուրախ-զվարթ մարդ, աննման զրուցակից և հիանալի կոմիկ, բազմաթիվ ընկերներն ու բարեկամները պարզապես հանգիստ չէին տալիս նրան: Փողոցում անկարելի էր նրա հետ քայլելը, որովհետև 10-15 քայլի վրա կանգնեցնում էին, խոսեցնում, հարց ու պատասխանի բռնվում, մի խոսքով, աշխատում էին որքան կարելի է ավելի երկար ժամանակ անցկացնել այդ իսկապես հմայիչ մարդու հետ: Նույնն էր դրությունը և Կինոստուդիայում. բավական էր, որ նկարահանումների միջև եղած ընդմիջումների ժամանակ, թարմանալու նպատակով Գաբրիելյանը դուրս գար փողոց, մարդիկ խիտ օղակով արդեն շրջապատում էին նրան:

- Բա ո՞նց, Ժողովրդական դերասան եմ հենց նրա համար, որովհետև ժողովուրդն ինձ շատ է սիրում, – ծիծաղելով կատակում էր նա:

Ժողովրդի կողմից նրա սիրված լինելու պատճառներից մեկն էլ այն էր, որ Գաբրիելյանը, – կարող եմ ասել առանց չափազանցնելու, – հազարավոր, ինչպես ինքն էր ասում, «Լիրբ» բանաստեղծություններ, շուտասելուկներ, բառախաղեր կամ քառյակներ գիտեր, որոնք, տեղը գալուն պես, ասում էր: Ըստ որում դրանք ասվում էին հատկապես որևէ առիթի կապակցությամբ, երբ, ասենք, հարկավոր էր փոխել մի անհաճո խոսակցություն, կամ պետք էր ուրախացնել մի վշտացած մարդու, կամ անհրաժեշտ էր ցրել մի տխուր տպավորություն և այլն: Եվ բոլոր նման դեպքերում, իբր պատահաբար, Գաբրիելյանը կասեր իր «Լիրբ» բանաստեղծություններից մեկը կամ մի քանիսը, և կասեր այնպիսի ձևով, որ անպայման կունենար իր ազդեցությունը:

Հիշում եմ այսպիսի մի դեպք:

Սցենարական բաժնում վիճում էին ինչ-որ հարցի շուրջ, և դրան մասնակցում էին Կինոստուդիայի դիրեկտոր Դավթյանը, բանաստեղծ Գևորգ Էմինը, ռեժիսոր Մելիք-Ավագյանը և ուրիշներ: Թե ինչ թեմայի շուրջ էր վիճաբանությունը և ինչպես այն սկսվեց, ճիշտն ասած, չեմ հիշում, բայց այն շուտով ընդարձակվեց, և մարդիկ սկսեցին իրար վիրավորել: Մի քանի անգամ սցենարական բաժնի վարիչը փորձեց հարթել վեճը, լռեցնել կողմերին, բայց անօգուտ:

Դժվարանում եմ ասել, թե այդ կրքոտ վեճն ինչ վախճան կունենար, բայց Գաբրիելյանը, որը մինչ այդ լուռ նստած էր, օգուտ քաղելով կարճատև լռությունց, ձեռքով թմբկահարելով սեղանը, ցածրաձայն, բայց բոլորի համար լսելի, մի տեսակ կարծես ինքն իր համար, երգեց.

У тетенки Нади

Все девчата бля...

Լռությունն ավելի երկարաձգվեց, դարձավ անհարմար, մի տեսակ կարծես խտացավ: Սենյակում եղած մարդկային բազմաթիվ գլուխներ պախարակող հայացքներով դարձան դեպի Գաբրիելյանը, շատերն էլ անհարմար զգալուց շառագունեցին: Այդ անհարմարության զգացումը պատեց ինձ էլ, որովհետև սենյակում կային նաև կանայք ու աղջիկներ, իսկ երգի վերջին խոսքերը առավել քան հասկանալի էին բոլորին: Իսկ Գաբրիելյանը, կարծես ոչինչ չէր եղել, ուրախ ժպիտով նայեց բոլորին, ծիծաղելի կերպով թարթեց մշտապես զարմացած աչքերը, ապա է՛լ ավելի մեծ ուժով թմբկահարելով սեղանը, շարունակեց.

Что? Ничего! Бляхами торгуют,

Не подумайте плохого,

Бляхами торгуют...

Եվ մի փոքր ընդմիջումից հետո, շարունակեց.

Ляк, тряляк-так, ляк тряляк-так,

Ляк, тряляк-так, так, так, так.

Վերջաբանն այնքան կտրուկ էր ու անսպասելի, մանավանդ սեղանի աշխույժ թմբկահարումն ու «ляк, тряляк-так»-երը կատարվում էին այնպես զավեշտորեն, որ սենյակում եղածները մի քանի րոպե ծիծաղից չէին կարողանում ուշքի գալ: Մոռացվեց քիչ առաջվա վեճն էլ, անախորժանալ սկսող խոսակցությունն էլ, և մարդիկ դարձան դեպի Գաբրիելյանը, որը գլխարկը ձեռքին բռնած, խեղճ ու թշվառ կերպարանքով շրջում էր սենյակով և, իբր, փող էր հավաքում ներկաներից, իր՝ քիչ առաջվա կատարած երգի համար...

Շատերն էին ասում, որ Գաբրիելյանը հիանալի կերպով գիտե աշխատել երիտասարդ կադրերի հետ, – դա ես անձամբ կարող եմ հավաստել: Մեր համատեղ աշխատանքի ընթացքում,

շուտով գործի կատարումը նա հանձնեց ինձ, հանձնեց, բայց աչալուրջ կերպով հետևում էր իմ ամեն արածին։

- Բալա ջան, էստեղ մի քիչ մտածենք, հա՞, – կասեր նա, մատը դնելով այն տողի վրա, որի թարգմանությունն իրեն դուր չէր եկել ու կավելացներ, – հապա մի քիչ մտածիր։

Ես մտածում էի և երբ գտնում էի ավելի հարմար տարբերակը, Գաբրիելյանն ուրախ թփթփացնում էր ուսիս, – ապրես, բալա ջան, ապրես։ Իսկ երբ իմ առաջարկն իրեն դուր չէր գալիս, ժպտում էր՝ թափահարելով գլուխը, – Չեղա՛վ, դու մի քիչ էլ մտածիր, ես հիմա կգամ։

Հաճախ էր պատահում, որ նա մի ժամվա ընթացքում 5-6 անգամ աշխատասենյակից դուրս էր ելնում, և ես հիանալի կերպով հասկանում էի դրա պատճառը։ Գաբրիելյանը չէր ուզում իր ներկայությամբ ճնշել և հնարավորություն էր տալիս ինձ՝ հանգիստ մտածելու։ Սկզբնական շրջանում լինում էր, իհարկե, որ ես չէի կարողանում գտնել որևէ նախադասության ճիշտ թարգմանությունը, կամ այն այդքան էլ հաջողված չէր լինում։ Նման դեպքերում Գաբրիելյանը միշտ պատրաստ էր։ Առաջարկելով ավելի ճիշտ թարգմանության տարբերակ, նա նրբանկատորեն սրախոսությամբ, կոմիկական արարքներով այնպես էր անում, որ անհարմար դրություն չստեղծվի ինձ համար։ Այո, Գաբրիելյանը հիանալի էր աշխատում երիտասարդ կադրերի հետ։

... Նրա մահը բոլորովին անսպասելի էր մեզ համար։ Գիտեինք, որ ստամոքսի ինչ-որ հիվանդություն ուներ՝ միշտ դիետա էր պահում, բայց ոչ մեկի մտքով անգամ չէր անցնում, որ դա կարող է քաղցկեղ լինել, որը այդքան շուտ կխլի մեզնից կենսախինդ այդ մարդուն։

Մահվանից մի քանի օր առաջ պայթել էր նրա ձախ ոտքի երակը և բժիշկը խստիվ արգելել էր տնից դուրս գալ։ Առավոտյան զանգ տվեց մեր տուն, հայտնեց, որ չի կարողանալու գալ, և խնդրեց, որ տեղադրման աշխատանքները մենակ կատարեմ։ Ես, իհարկե, հավաստիացրեցի, որ կաշխատեմ ամենայն խնամքով և շտապեցի ստուդիա։ Մտա տեղադրման համար մեզ հատկացված դահլիճը, տեսնեմ՝ Գաբրիելյանը նստած է իր մշտական տեղում։

- Բալա ջան, բարև, – ուրախ ու աշխույժ ժպտաց նա։

- Ախր ինչո՞ւ եք եկել, ընկեր Գաբրիելյան, – վրա տվեցի ես՝ նայելով հորիզոնական դրված ու փաթաթաններով փաթաթված նրա ոտքին։ - Տանը կհանգստանայիք, ինչպես հարկն է կկազդուրվեիք, ես ամեն ինչ կանեի...

- Բալա ջան, ես ու ոտքս խորհրդի նստեցինք, – շատ լուրջ սկսեց նա, – հարցնում եմ՝ պարոն ոտք, քեզ համար միևնույն չի՞, թե դու մեր տան հատակի վրա պիտի ման գաս, թե՞ այստեղ։ Միևնույն է, չէ՞։ Տաքսի եմ կանչել տան մոտ, ոտքս առոք-փառոք դրել եմ մեջը և առել-բերել եմ այստեղ։ Դե դու ասա, բալա ջան, ոտքս շա՞տ պիտի իմանա, թե ինքը տանն է մնացել, թե դուրս է եկել։ Մանավանդ որ, – շարունակեց նա, – այսօր էլ գործ քիչ ունենք, երեկոյան էլ ներկայացում չունեմ։ Է՛հ, դրանից էլ լավ հանգիստ։

Մենք լիուլի ծիծաղեցինք։

Ընդհանրապես Գաբրիելյանը չափից շատ էր աշխատում։ Առավոտյան նա էր երեխային տանում դպրոց, տան համար բոլոր գնումները նա էր կատարում, միշտ ստուդիայից թարգմանություններ էր վերցնում, և ես չեմ հիշում գոնե մի դեպք, որ նա ուշացներ թարգմանությունը կամ կատարեր հապճեպ՝ զոհաբերելով որակը։ Այս բոլորին ավելացրած տեղադրման աշխատանքը ստուդիայում, որ տևում էր ամեն օր 5-6 ժամ, ամենօրյա փորձերը թատրոնում և երեկոյան ներկայացումները, որոնց նա գրեթե միշտ ներկա էր լինում, եթե անգամ այդ օրը զբաղված չլիներ, և այլն, և այլն։ Նրա յուրաքանչյուր վայրկյանը հաշված էր, և ոչ միայն ընկերները, այն նույնիսկ ես մի անգամ համարձակվեցի դիտողություն անել այս կապակցությամբ։ Եվ ինձ թվում է, որ հանգիստ չճանաչող այդ աշխատանքն էր պատճառը, որ այդքան անժամանակ կտրվեց նրա կյանքի թելը։

Մենք այդ օրն էլ աշխատեցինք միասին։ Զգում էի, որ Գաբրիելյանի համար ծանր է, որ դժվարությամբ է ցավը հաղթահարում, բայց դրանով հանդերձ շարունակում էր սրախոսել ու կատակներ անել ինձ և ստուդիայի աշխատակիցների հետ։ Ինչպես միշտ, այս անգամ էլ թույլ չտվեց, որ բռնեմ վերարկուն, թեև հագավ մեծ ճիգով ու դժվարությամբ։

Ժամը 2-ի մոտ դուրս եկանք մեր աշխատասենյակից։

- Է՛հ, բախտ չունեցանք, էլի, քեզ հետ անմահանալու պատմության մեջ, – կես-կատակ, կես-լուրջ ասաց նա։

Մենք ծիծաղեցինք։

Այդ «անմահանալն» էլ ուներ իր հետաքրքրական պատմությունը։ ՈՒմ որ շատ էր սիրում Գաբրիելյանը, կամ ում հանդեպ լավ էր տրամադրված լինում, նրա հետ լուսանկարվում էր, դրանցից մեկը պահում էր իր մոտ, մյուսը՝ մակագրությամբ, տալիս էր այն մարդուն, ում հետ

նկարվել էր։ Ես նրա մոտ տեսել եմ այդպիսի մի քանի ֆոտոնկարներ, և այս բանը, ի դեպ, բավական տարածված էր Կինոստուդիայում։ Իրեն հատուկ հումորով Գաբրիելյանն այդ անվանում էր «անմահանալ» կամ «պատմության մեջ հետք թողնել»։ Նույն բանն էլ զանազան առիթներով առաջարկեց ինձ, բայց միշտ չէր ստացվում, ինչ-որ բան խանգարում էր։

Չանցած մի քանի օր՝ իմացանք, որ Գաբրիելյանին տարել են հիվանդանոց։ Եվս մի քանի օր անց՝ 1956 թ., մարտի վերջերին առավոտյան շուտ զանգ տվեցին Ստուդիայից։ Հարկավոր էր Գաբրիելյանի համար ծաղկեպսակներ գնել...

Մինչև գերեզմանոց ճանապարհեցի իմ լավ բարեկամին, ավելի լավ մարդուն և ամենալավ դերասանին, շատերի հետ ես էլ մի բուռ հող լցրեցի նրա դագաղի վրա...

Այդ օրվանից շատ ժամանակ է անցել, սակայն մինչ օրս էլ Գաբրիելյանի մասին խոսելիս, սրտի կսկիծ եմ ապրում այն տխուր մտքից, թե ինչո՞ւ չնկարվեցի նրա հետ։ Չէ՞ որ դա կլիներ իմ ամենաթանկագին, ամենանվիրական հիշատակներից մեկը, որպիսին, թերևս, երբեք չեմ ունեցել...

Ինչո՞ւ չնկարվեցի Գաբրիելյանի հետ...

1957 թ., մայիս-հունիս